Co-funded by the European Union

Erasmus+ QA4VET

Փորձնական հավատարմագրման իրականացում. ՄԿՈՒ հաստատությունների փորձը

«Երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ

Խոսնակ՝ Նարա Հովհաննիսյան, տնօրեն

Հուլիսի 13, 2026թ.

Implementing partners:

aracip

involas
Institute for Vocational Education and Training, Labour Market and Social Policy

ANQA
NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE FOUNDATION

ACEP

Քաղված դասեր և հիմնական մարտահրավերներ

- **Ինքնագնահատման համակարգում.**

Ինքնագնահատման ընթացքում ապացույցների բազայի առավել թիրախային համակարգման և չափանիշների միասնական ընկալման կարևորությունը: Ինքնագնահատման մեխանիզմների կարևորության շեշտադրում ողջ անձնակազմի համար և արդյունքների արդյունավետ կիրա ռում գործնականում

- **Կառավարման շրջափուլի կատարելագործում.**

Երբեմն վարչարարությունը սահմանափակվում է պլանավորմամբ և իրականացմամբ, ինչը դիտարկվում է որպես PDCA շրջափուլի (հատկապես գնահատման և բարելավման փուլերի) հետագա կատարելագործման հնարավորություն: Անհրաժեշտություն կա հետադարձ կապի միջոցով հաջորդական քայլերը բաշխել անձնակազմի մեջ:

- **Շահակիցների ներգրավվածություն.**

Արտաքին շահակիցների (գործատուների և շրջանավարտների) դերի ակտիվացումը ռազմավարական ծրագրի մոնիթորինգի և գնահատման գործընթացներում: Կարիք կա ավելի համակարգելու նրանց մասնակցությունը և այն դարձնելու պարբերական:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- **Տվյալահեն որոշումների կայացում.** ՈԱ պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները դարձել են հիմք տնօրինության համար կայացնելու ապացուցահեն որոշումներ: Օրինակ՝ դասախոսների շրջանում վերհանված կարիքների հիման վրա պլանավորվել են թիրախային մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումներ:

- **Հետադարձ կապի թվայնացում.** QR կոդերի միջոցով հարցումների իրականացման համակարգի ներդրումը կտրուկ բարձրացրել է տվյալների հավաքագրման և վերլուծության արագությունը, ինչպես նաև մեծացրել է ուսանողների վստահությունն ու հետաքրքրությունը գործընթացի նկատմամբ:

- **Որակի մշակույթ և պատասխանատվություն.** Գործընթացը նպաստել է քոլեջում որակի մշակույթի ձևավորմանը՝ հստակեցնելով ստորաբաժանումների պատասխանատվությունները և անցում կատարելով «թղթաբանական» մոտեցումից դեպի բովանդակային բարելավումներ:

- **Հետազոտական բաղադրիչի արժևորում.** Ուսանողների կողմից կատարվող կիրառական հետազոտությունները (բիզնես պլաններ, շուկայի վերլուծություններ) հաջողությամբ ինտեգրվել են ուսումնական պլաններում՝ զարգացնելով նրանց վերլուծական հմտությունները:

- **Կարիերայի կենտրոնի մոնիթորինգ.** Շրջանավարտների զբաղվածության պարբերական վերլուծությունը թույլ է տալիս գնահատել կրթական ծրագրերի հասցեականությունը և Կարիերայի կենտրոնի ծառայությունների ազդեցությունը աշխատաշուկայում:

- **Կարիքահեն դասալսումներ.** Դասալսումների իրականացումը ոչ թե ձևական բնույթ է կրում, այլ ուղղված է ակադեմիական մարտահրավերների վերհանմանը և ռեսուրսների համալրման վերաբերյալ որոշումների կայացմանը:

Առաջարկությունները և փորձի փոխանակում

Ձեռք բերված փորձը կարող է ծառայել որպես ուղենիշ այլ ՄԿՈՒ հաստատությունների համար՝ հետևյալ երեք ուղղություններով:

Գործատուների հետ կապեր. Գործատուների հետ համագործակցության սերտացում և աշխատանքի վրա հիմնված ուսուցման (դուալ համակարգ) փորձնական մոդելների ներդրում:

Անձնակազմի զարգացում. Դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացման համակարգված պլանավորում: Այժմ ակտիվորեն կազմակերպվում են ներքին վերապատրաստումներև փորձի փոխանակման աշխատարաններ յուրաքանչյուր արտաքին վերապատրաստումից հետո:

Միջազգային գործիքակազմ. QA4VET ծրագրի շրջանակներում տրամադրվող գործիքակազմի և միջազգային փորձի կիրառում ՄԿՈՒ հաստատությունում: Միջազգային ծրագրերը հնարավորություն են տալիս առաջավոր փորձը տեղայնացնել քոլեջում:

Հիմնական եզրակացություններ

Ինստիտուցիոնալ ինքնաճանաչում

Գործընթացը հնարավորություն տվեց հաստատությանը վերանայել որակի ապահովման մոտեցումները և բացահայտել զարգացման ներուժը:

Շարունակական բարելավում

Որակի մշակույթի ամրապնդումը երաշխիք է աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջներին արդյունավետ արձագանքելու համար:

Հաջորդ քայլեր. ընդհանուր տեսլականից մինչև անհատական պատասխանատվություն

Հստակ վերջնաժամկետներ. Փորձնական հավատարմագրումից հետո թիմի բոլոր անդամների համար սահմանվել են հստակ վերջնաժամկետներ:

Հարցումների ամփոփում. Իրականացվում է հարցումների արդյունքների ամփոփում՝ անցած փուլը գնահատելու համար:

Կապ մեծ նպատակի հետ. Այս փուլի ավարտը դիտարկվում է հաստատության ընդհանուր ռազմավարական նպատակի և տեսլականի համատեքստում:

Տեսլականի պատվիրակում. Հավատարմագրումից հետո ավելի է կարևորվել թիմի յուրաքանչյուր անդամի՝ մեծ նպատակին հասնելու համար իր անելիքի հստակ ամրագրումը և իրատեսական ժամկետների սահմանումը:

Շնորհակալություն

Funded by the European Union. Views and opinions expressed are however those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union or the European Education and Culture Executive Agency. Neither the European Union nor the granting authority can be held responsible for them